Ռափայել Պատկանյան

Հայերուս բաղձանքը

Ա՛խ, ինչպե՛ս կուզեմ տեսնել մեր հային
Ազատ, ապահով, կրրթյալ, ինքնագոհ,
Ամեն հայի տուն՝ դրրախտ երկնային . . .
Լոկ այդ բանն ինձնից չուզենար մեկ զոհ:

Ա՛խ, ինչպե՛ս կուզեմ տեսնել Հայաստան
Մի օր ազատված թրշնամու ձեռքին,
Հայի երկիրը, հայի սեփական . . .
Լոկ այդ չի բաժաներ ինձ իմ կոպեկեն:

Ա՛խ, ինչպե՛ս կուզեմ, որ մեր հայերուս
Արծարծվեր սերը, ուսման, գիտության,
Հայի մեջ չի մնար մի հատիկ անուս . . .
Լոկ հեռի ինձնից թուղթ ստորագրության:

Ա՛խ, ինչպե՛ս կուզեմ, որ հայ պատանիք
Դեպ համալսարան խրմբով վազեին,
Եվ Զվիցերիա երթար հայ աղջիկ . . .
Լոկ ինձնից նոքա կոպեկ չուզեին:

Ա՛խ, ինչպե՛ս կուզեմ, որ մեր զեյթունցին
Միթոայլյոզ, շասպո, ողմբկեն ունենար,
Զարդ ու բուրդ աներ քուրդ ու չերքեզին . . .

Լոկ ինձնից զենքի նա փող չուզենար:

Երբ մեր հայրենին հրաշքով ազատվեր,
Մերոնք էլ ազատ կյանք-օր վարեին,
Ա՛խ, ինչպե՛ս, ինչպե՛ս լավ բան կըլներ,
Երբ հայք ինձ իրանց իշխան ընտրեին: